

ՀԱՆԵԼՈՒԿ

Ոչ կը լսե, ոչ կը խօսի,
 Ոչ կը զգայ, ոչ կը տեսնե,
 Սակայն ան մեզ բոլորիս
 Բաց ճանապարհ ցոյց կու տայ:

(վրձնապատկեր) ճանաչող
 :դրոյնատու

Ամբողջացու՛ր ցանցը, որպէսզի թիւ 8-ին մէջ գիտնաս
 ի՞նչ է պահուած բանը:


1. Մայրութեան եւ առատութեան աստուածուհին:
2. Քուրմերուն պետը:
3. Յարդգողի ճանապարհը:
4. Հեթանոսական աղօթատեղի, մեհեան:
5. Միակ կանգուն մնացած տաճարը:
6. Հեթանոս կրօնաւոր:
7. Գեղեցկութեան աստուածուհին:


	1			8		
2						
3						
			4			
	5					
		6				
		7				

- | | |
|--------------|----|
| նսղմել | 8. |
| կիւտող | 7. |
| ըմս | 6. |
| վղտ | 5. |
| մտոց | 4. |
| ղվելու մկ | 3. |
| տշկոյն | 2. |
| տկտու | 1. |
| :մղղղղղղղղղղ | |



Գունաւորե՛ հետեւեալ պատկերը
 նախասիրած գոյներով:





ԻՆՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԷ ԿԸ ԲԱՂԿԱՆԱՆ ԲՈՅՍԵՐԸ

Արմատներ, ցողուն, տերեւներ ու ծաղիկներ:

Արմատները գայն կը հաստատեն հողին մէջ, ուրկէ կը ներծծեն ջուր ու սննդանիւթ: Կարգ մը արմատներ ուռուցիկ են, ուրիշներ՝ երկար ու բարակ:

Տերեւները ցողունին վրայ ամրացուած են իրենց կոթուններով:

Ծաղիկներու պարագային, փերթերն ու թերթերը կը շրջապատեն որձաներն (դերձան) ու իգաները (սերմնափակ), որոնք կը ծառայեն բուսական սերնդագործութեան:

Արմատներուն եւ ցողունին մէջ կը գտնուին բարակ խողովակներ, որոնց մէջէն կը շրջագայի հողէն ներս ծծուած ջուրը: Նոյն դերը կը կատարեն

նաեւ տերեւներուն վրայ տեսնուած շիղերը:

Կանաչ բոյսերը ներքնապէս կը պատրաստեն իրենց սնունդը կանաչանիւթի օգնութեամբ: Անոնք կը գործածեն արեւուն լոյսը, ներծծուած ջուրին եւ օդին մէջ գտնուող բնածխային թթուն՝ պատրաստելու համար անհրաժեշտ սննդանիւթը: Այս գործընթացը կը կոչուի՝ լուսաբաղադրում:

Բոյսերը նաեւ կը շնչեն ու կը քրտնին: Ջուրը կը շոգիանայ ընդհանրապէս տերեւներուն տակ գտնուող մանր ծակտիկներէ:

ՏՆԱՅԻՆ ԲՈՅՍԵՐԸ

Ոմանց համար սենեակի մէջ տեղադրուելիք տնային բոյսերը

պարզապէս տան զարդարանք են, իսկ զանոնք խնամելը՝ կենցաղային պարտականութիւն: Սակայն կան մարդիկ ալ, որոնց համար այդ բոյսերը աճեցնելն ու խնամելը մեծ հաճոյք են ու արուեստ: Այս տեսակի մարդիկն են, որոնք բոյսերէն կը ստանան ուժ ու բարձր տրամադրութիւն՝ օգտագործելով որպէս ընկերակից եւ անոնց ցուցաբերելով անսահման հոգատարութիւն:

Չէ՞ որ մենք կը շնչենք թթուածին եւ կ'արտաշնչենք ածխաթթու կազ: Բոյսերն ալ իրենց կարգին կը շնչեն այդ ածխաթթու կազը ու կ'արտադրեն թթուածին՝ մաքրելով ու թարմացնելով օդը:

Բոյսերը նաեւ կ'արտադրեն այնպիսի ջրային նիւթ մը, որ կը բարձրացնէ օդին

խոնաւութեան մակարդակը, որուն արդիւնքով պայքար կը մղենք շնչառական հիւանդութիւններու, չոր մաշկի, կոկորդի ցաւի եւ չոր հագի դէմ:

Սենեակի մէջ տեղադրուող տնային բոյսերը դրական ազդեցութիւն կը ձգեն նաեւ հիւանդներու ու գրասենեակային աշխատանք տանողներու վրայ: Եթէ հիւանդանոցի սենեակին մէջ կան բոյսեր, հիւանդները աւելի արագ կ'ապաքինին եւ աւելի քիչ ախտանշաններ կ'երեւին անոնց վրայ, իսկ գրասենեակային աշխատանք տանողներու պարագային, բոյսերու շրջապատին մէջ աւելի առոյգ կ'ըլլան եւ աւելի քիչ կը հիւանդանան:



ԺՈՔՈՆՏԸ

ՈՉ ԹԱՐԹԻՉ, ՈՉ ԱԼ ՅՕՆՔ ՈՒՆԻ՞...

Ժոքոնտ անունով ճանչցուած Մոնա Լիզային դիմանկարը նկարուած է 1503 թուականին շուրջ, Լեոնարդո Տա Վինչիի կողմէ:

Հակառակ իր փոքրիկ չափին (77x53 սմ.)՝ իւղաներկով գծուած այս պատկերը մրցանիշներ կը նուաճէ, որովհետեւ օրական աւելի քան տասն հինգ հազար անձեր կու գան զմայլելու անոր խորհրդաւոր ժպիտով:

Այս դիմանկարին իւրայատկութիւններէն մէկն ալ այն է, որ Մոնա Լիզան ո՛չ թարթիչ, ո՛չ ալ յօնք ունի: Կայ երկու վարկած՝ բացատրելու այս խորհրդաւոր կէտը:

Ըստ մէկ ենթադրութեան, իսկական Մոնա Լիզան իր դէմքին մազերը կը հաներ, արդեօ՞ք 16-րդ դարուն նորո՞յթ էր թարթիչ եւ յօնք չունենալը:

Ուրիշ ենթադրութիւն մը կ'ըսէ, որ այդ մանրամասնութիւնները գծուած են



գեղանկարին վրայ, սակայն անոնք անհետացած են ժամանակի ընթացքին: Շնորհիւ յառաջդիմած արհեստագիտութեան՝ խոր ուսումնասիրութիւններ կատարուած են դիմանկարին վրայ, երկրորդ ենթադրութիւնը աւելի հաւանական կը թուի:

ԳԻՏԵԻ՞Ր ԹԷ...

1911-ին ժոքոնտը գողցուեցաւ Լուվրի թանգարանէն: Ժամանակ մը Կիյոմ Ափոլինէր բանաստեղծը եւ արուեստագէտ Փապլօ Փիքասօն կասկածի տակ առնուեցան: Սակայն երկու տարի ետք իսկական գողը ձերբակալուեցաւ: Վենչենզօ Փերուճիա իտալացի ապակեգործ մըն էր, որ ժամանակ մը աշխատած էր թանգարանին մէջ: